ՍԵՂՄԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԼԻԶԻՆԳԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգի մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է:

Ծրագրի շրջանակներում լիզինգի պայմանագրով տնտեսավարողներին տրամադրվում են հետևյալ ոլորտներում օգտագործվող սարքավորումներ՝

ա. անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն, արդյունագործական գազանաբուծություն, խխունջաբուծություն,

բ. բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմատնային տնտեսություն,

գ. սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ և կաթ տեղափոխող իզոթերմիկ ցիստերներ,

դ. թարմ պտուղբանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն,

ե. սպանդանոցային տնտեսություն, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներ, ինչպես նաև սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներ,

զ. ագրովերամշակող արդյունաբերություն,

է. ագրոպարենային գործունեության այլ ոլորտներ:

Ծրագրի շրջանակներում տնտեսավարողներին կտրամադրվեն նաև ավտոամբարձիչներ և հիմնական միջոց հաշվառվող հումքի և արտադրանքի պահման մետաղյա տարողություններ ու գինեգործության ոլորտում օգտագործվող կաղնեփայտե տարաներ:

Ծրագրին կարող են մասնակցել սարքավորումների ձեռքբերման համար սույն ծրագրի պայմաններին համապատասխան լիզինգի պայմանագիր կնքած ագրոպարենային ոլորտի տնտեսավարողները (ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ, համայնքները (եթե տվյալ լիզինգի առարկան նախատեսված չէ ձեռք բերելու սուբվենցիոն ծրագրերով)), որոնք բավարարում են ծրագրին

մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության (այսուհետ՝ ֆինանսական կառույց կամ ՖԿ) ֆինանսական (վարկունակության) պահանջները:

Լիզինգի տրամադրման պայմաններն են՝

1) Ծրագրով ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին տրամադրվելիք սարքավորումները ձեռք կբերվեն արտադրող և (կամ) իրացնող կազմակերպություններից, որոնք կամ իրենց կողմից երաշխավորված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձանց միջոցով կիրականացնեն նաև սարքավորումների երաշխիքային և (կամ) հետերաշխիքային սպասարկում.

2) լիզինգի պայմանագիրը կնքվում է մինչև 5 տարի ներառյալ մարման ժամկետով.

3) լիզինգի հիմնական գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առավելագույնը 3 ամիս: Բացի այդ, լիզինգառուի դիմումով ֆինանսական կազմակերպության (այսուհետ՝ ՖԿ) կողմից կարող են սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով.

4) լիզինգի հետ կապված ՖԿ-ների ծառայությունների համար այլ վճարներ (սպասարկման վճար, միջնորդավճարներ և այլն) չեն գանձվում.

5) լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար.

6) լիզինգի առարկայի արժեքը ներառում է լիզինգի առարկայի ձեռքբերման գինը, լիզինգի առարկայի Հայաստանի Հանրապետություն ներմուծման հետ կապված ծախսերը (տեղափոխում, այդ թվում՝ տեղափոխման հետ կապված այլ ծախսեր, մաքսազերծում, ավելացված արժեքի հարկ և այլն).

7) Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի **2000.0 մլն դրամը**.

8) լիզինգի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, լիզինգի առարկան պարտադիր ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից՝ ՖԿ-ների հաշվին.

9) տրամադրվող լիզինգների առավելագույն տոկոսադրույք չի սահմանվում: Սուբսիդավորվում է Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրված լիզինգի 10, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 6 տոկոսային կետը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար՝ Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրված լիզինգի 12, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում.

10) շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցների ձեռքբերման նպատակով 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը սուբսիդավորվում է Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրվող լիզինգի 12, արտարժույթով տրամադրվող լիզինգի 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցները շահագործվելու են Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից տրամադրված ցանկում ներառված բնակավայրերի տարածքներում.

11) Ծրագրի **N 2 աղյուսակում (ներկայացված է ստորև)** ներկայացված համայնքներում տեղակայելու նպատակով տնտեսավարողների կողմից ձեռք բերվող շարժական և (կամ) շարժական մոդուլային սպանդանոցների լիզինգի համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 75 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 4.8 մլն դրամը սուբսիդավորվում է.

Աղյուսակ N 2

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից քարտեզագրված սպանդանոցային ցանցի թիրախավորված համայնքներ

Մարզը	**Բնակավայրերը**			
Սյունիք (ընդհանուր թվով 3 սպանդանոց)	Գորիայք	Ծղուկ	Սառնակունք	Սպանդարյան
	Ծավ	Ն. Հանդ	Սրաշեն	Շիշկերտ
	Մեղրի			
Գեղարքունիք (ընդհանուր թվով 1 սպանդանոց)	Ծափաթաղ	Ջիլ	Փամբակ	
Արարատ (ընդհանուր թվով 2 սպանդանոց)	Դվին	Վերին Դվին	Նորաշեն	Վերին Արտաշատ
	Ուրցաձոր	Վեդի	Շաղափ	Լանջանիստ
Շիրակ (ընդհանուր թվով 4 սպանդանոց)	Արթիկ	Փանիկ	Մեծ Մանթաշ	Նոր Կյանք
	Ախուրյան	Արևիկ	Կառնուտ	Ազատան
	Ամասիա	Բանդիվան	Արեգնադեմ	
	Աշոցք	Սիզավետ	Բավրա	
Լոռի (ընդհանուր թվով 2 սպանդանոց)	Գյուլագարակ	Վարդաբլուր	Գարգառ	Կուրթան
	Վահագնի	Վահագնաձոր	Եղեգնուտ	Ձորագետ
Արագածոտն (ընդհանուր թվով 2 սպանդանոց)	Ծաղկահովիտ	Վարդաբլուր	Սադունց	Կանիաշիր
	Թալին	Աշնակ	Կաթնաղբյուր	Մաստարա

12) 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը տնտեսավարողների կողմից ձեռք բերվող շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցների համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 80 տոկոսը սուբսիդավորվում է (այն բնակավայրերի ցանկը, **(ներկայացված է ստորև)** որոնց վարչական տարածքում անհրաժեշտ է ապահովել սպանդանոցային ծառայության մատուցում, հրապարակված են Էկոնոմիկայի նախարարության և մարզպետների աշխատակազմերի պաշտոնական կայքերում).

Ցանկ

այն բնակավայրերի, որոնց վարչական տարածքում անհրաժեշտ է ապահովել սպանդանոցային ծառայության մատուցում

Մարզը	**Համայնքը**	**Բնակավայրը**
Արագածոտն	**Աշտարակ**	Սասունիկ
		Օհանավան
		Արուճ
	Թալին	Ներքին Բազմաբերդ
		Ներքին Սասնաշեն
		Ցամաքասար
		Զովասար
	Ծաղկահովիտ	Ծաղկահովիտ
	Ալագյազ	Ջամշլու
	Արևուտ	Արևուտ
		Կանչ
Արարատ	**Արտաշատ**	Լանջազատ
		Նարեկ
	Արարատ	Զանգակատուն
		Պարույր Սևակ
		Արմաշ
		Արարատ
	Վեդի	Ուրցաձոր

		Ոսկետափ
	Վերին Դվին	
Արմավիր	**Արմավիր**	Մյասնիկյան
	Բաղրամյան	Վանանդ
	Խոյ	Արագած
		Դաշտ
Գեղարքունիք	**Մեծամոր**	Արգավանդ
		Բամբակաշատ
		Երասխահուն
		Շենավան
	Սևան	Նորաշեն
		Ծովագյուղ
	Մարտունի	Ներքին Գետաշեն
		Վարդենիկ
	Ճամբարակ	Այգուտ
		Արտանիշ
Լոռի	**Փամբակ**	Փամբակ
		Մարգահովիտ
		Անտառամուտ
		Դեբետ
		Եղեգնուտ
		Ձորագետ
		Ձորագյուղ
		Վահագնաձոր
		Վահագնի
		Քարաբերդ
	Տաշիր	Ձյունաշող
		Պաղաղբյուր
		Ապավեն
	Սպիտակ	Գեղասար
		Գոգարան
		Լեռնավան
		Լուսաղբյուր
		Խնկոյան
		Ծաղկաբեր
		Կաթնաջուր
		Հարթագյուղ
		Մեծ Պարնի
		Շիրակամուտ
		Սարալանջ
	Ստեփանավան	Կաթնաղբյուր
	Ալավերդի	Ակներ
		Ծաղկաշատ

		Կաճաճկուտ
		Հաղպատ
		Ջիլիզա
		Շամլուղ
	Լոռի Բերդ	Յաղդան
		Հովնանաձոր
		Կողես
	Թումանյան	Աթան
		Ահննիձոր
		Լորուտ
		Մարց
		Շամուտ
		Քարինջ
		Դսեղ
		Չկալով
		Թումանյան
	Ֆիոլետովո	
	Լերմոնտովո	
Կոտայք	**Ծաղկաձոր**	Մեղրաձոր
Վայոց ձոր	**Արենի**	Ագարակաձոր
		Արենի
		Արփի
		Աղավնաձոր
		Գնիշիկ
		Ելփին
		Խաչիկ
		Չիվա
		Ռինդ
	Եղեգիս	Արտաբույնք
		Հորբատեղ
		Շատին
		Եղեգիս
		Հերմոն
		Վարդահովիտ
		Գողթանիկ
		Հորս
		Քարագլուխ
		Աղնջաձոր
		Թառաթումբ
		Սալլի
	Եղեգնաձոր	Եղեգնաձոր
		Գլաձոր
		Վերնաշեն
		Գետափ

		Մալիշկա
	Վայք	Վայք
		Խնձորուտ
		Արտավան
		Սարավան
		Գոմք
		Բարձրունի
		Սերս
		Նոր Ազնաբերդ
		Մարտիրոս
		Զառիթափ
		Ազատեկ
		Փոռ
		Արին
		Զեդեա
		Կարմրաշեն
		Հերհեր
	Ջերմուկ	Ջերմուկ
		Կեչուտ
		Գնդեվազ
Տավուշ	**Իջևան**	Աչաջուր
		Այգեհովիտ
		Գանձաքար
		Դիտավան
		Լուսահովիտ
		Ծաղկավան
		Կիրանց
		Սարիգյուղ
		Սևքար
		Վազաշեն
	Դիլիջան	Աղավնավանք
		Հաղարծին
		Հովք
		Խաչարձան
	Բերդ	Այգեձոր
		Այգեպար
		Արծվաբերդ
		Ծաղկավան
		Մովսես
		Նորաշեն
		Ներքին Կարմիրաղբյուր
		Վերի Կարմիրաղբյուր
		Չինարի
		Չորաթան

		Պառավաքար
		Վարագավան
		Տավուշ
	Նոյեմբերյան	Այրում
		Արճիս
		Բագրատաշեն
		Բաղանիս
		Բարեկամավան
		Դեբեդավան
		Դեղձավան
		Զորական
		Լճկաձոր
		Կոթի
		Հաղթանակ
		Ոսկեպար
		Ոսկեվան
		Պտղավան
Սյունիք	**Կապան**	Արծվանիկ
		Անտառաշատ
		Աղվանի
		Դավիթ Բեկ
		Եղվարդ
		Ծավ
		Ճակատեն
		Նորաշենիկ
		Սևաքար
		Վ.Խոտանան
	Մեղրի	Շվանիձոր
		Վարդանիձոր
		Նռնաձոր
		Տաշտուն
		Լիճք
	Քաջարան	Քաջարան
		Գեղի
		Լեռնաձոր
		Նոր Աստղաբերդ
		Ձագիկավան
		Փուխրուտ
		Աջաբաջ
		Կավճուտ
		Բաբիկավան
		Կաթնառատ
	Գորիս	Որոտան
		Բարձրավան

		Շուռնուխ
	Տաթև	Տաթև
		Քաշունի
		Տանձատափ
		Սվարանց
	Սիսիան	Տորունիք
		Ծղուկ
		Սառնակունք
		Սպանդարյան
		Անգեղակոթ
		Շաղատ
		Բալաք
		Մուցք
		Արևիս
		Ախլաթյան
		Տորունիք
		Լոր
		Շենաթաղ
		Նժդեհ
		Դաստակերտ
		Վաղատին
		Որոտնավան
		Շամբ
		Դարբաս
		Գետաթաղ
		Սալվարդ
Շիրակ	**Ախուրյան**	Վահրամաբերդ
		Հացիկ
		Ջաջուռ
		Ախուրյան
		Բենիամին
		Երազգավորս
		Ոսկեհասկ
		Քեթի
		Բասեն
		Այգաբաց
	Անի	Քարաբերդ
		Աղին
	Արթիկ	Արթիկ
		Մեծ Մանթաշ
		Հայրենյաց
	Աշոցք	Թավշուտ
		Փոքր Սարիար
		Ցողամարգ

	Ամասիա	Զորակերտ
		Ողջի
		Արեգնադեմ

13) այն դեպքում, երբ սպանդանոցը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ ՖԿ-ի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական սպանդանոցը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցված է սպանդանոցը)՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա: Այս դեպքում սպանդանոցի կառուցման նախագիծը և անասնաբուժասանիտարական պահանջները նախապես համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ.

14) այն դեպքում, երբ կառուցվածքը (կոնստրուկցիան) կազմում է լիզինգով ձեռք բերվող տեխնոլոգիական սարքավորման անբաժանելի մաս, այդ թվում՝ հավաքովի կառուցվածքով (կոնստրուկցիայով) սպանդանոցը, ապա կառուցվածքը կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա.

15) ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից ջրային ռեսուրսների այլընտրանքային օգտագործման ապահովման նպատակով ձեռք բերվող սարքավորումների, մասնավորապես՝ օդով (թթվածնով) հարստացնող համակարգի (Air Lift sistem), աերատորի (թթվածնով հարստացվող սարք), ձայնամեկուսիչ արկղով օդամղիչ սարքի (blower with outdoor sound cabinet), մանրէազերծող բիո և մեխանիկական ֆիլտրերի համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 50 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 6.0 մլն դրամը սուբսիդավորվում է՝ յուրաքանչյուր տնտեսավարողի համար մեկ անգամ.

16) հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից ձեռք բերվող սարքավորումների համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 80 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 4.0 մլն դրամը (յուրաքանչյուր տնտեսավարողի համար) սուբսիդավորվում է.

17) այն դեպքում, երբ ջերմատունը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ ՖԿ-ի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական ջերմատունը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցվում է ջերմատունը) համալրված անհրաժեշտ սարքավորումներով, կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա (բացառությամբ այն դեպքի, երբ ջերմատունը կառուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի

նոյեմբերի 14-ի N 1612-Լ որոշմամբ հաստատված «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի» շրջանակներում).

18) այն դեպքում, երբ սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ ՖԿ-ի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցվում է սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը), համալրված անհրաժեշտ սարքավորումներով, կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա:

Ծրագրից օգտվելու համար շահառուները կարող են դիմել Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքի համապատասխան էջում տեղադրված ցանկում ընդգրկված ֆինանսական կառույցներին:

Ծրագրով սահմանված դեպքերում կանխավճարի սուբսիդավորում ստանալու համար տնտեսավարողները կարող են դիմել Էկոնոմիկայի նախարարություն՝ secretariat@mineconomy.am էլեկտրոնային հասցեով:

Ծրագրի մոնիթորինգն իրականացնում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը՝ ՖԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության և վարկառուների ընտրանքային ուսումնասիրության հիման վրա:

Ծրագրի շրջանակներում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը տնտեսավարողների կողմից ձեռք բերվող շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցների համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 80 տոկոս սուբսիդավորմամբ սպանդանոց ձեռք բերած լիզինգառուի կողմից Ծրագրի N 8 ձևի հայտարարությունով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մոնիթորինգը վերապահվում է շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցի նախատեսված շահագործման վայրի մարզի համայնքին: